

ԵՐՈՒԱՐԴ ԵՖԵՆԴԻ ԳԱՐՏՆԻՔԸ

ՊԱՏԿԵՐ

ՑԻԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՑԻ:

(Իմ յիշողութիւններից)

Ա.

Հրամանքդ հրաւիրւած չե՞ս համբարձում աղենց կողմ,—հարցուց ինձ մի կիրակի երեկոց հաջի Պետրոս աղան, որ եկած էր ինձ ացելութեան:

—Հրաւիրւած եմ,—պատասխանեցի ես:

—Ուրեմն գնա՞նք միասին: Կ'երեի թէ համբարձում աղան կալաբալը (աղմուկ) շատ պիտի ունենայ, քառասունէն աւելի մարդ է կանչած. . .

Ես համաձայնեցայ և դուրս ելանք միասին սենեակիցս:

Հաջի Պետրոս աղան իմ սովորական հիւրերիցն էր: Ես սիրում էի նրա անկեղծութիւնն ու անկորմնակալութիւնը: Ճիշտ է, նա չէր ո՛չ ուսեալ և ո՛չ մեծ խելքի տէր, բայց իր նախապաշարումներով ու սիալ հայեացքներով հանդերձ նա համակրելի էր ինձ, զի խօսում էր ճիշտ այն, ինչ որ մտածում էր: Նա քսան տարուց աւելի «կօմիսիօն» պաշտօն էր կատարում Կ. Պօլիս և նոր էր վերադարձել ու ամուսնացել 47 տարեկան հասակում:

—Հրամանքդ դաւէթներ (խնձոյք) շատ կերթա՞ս, —հարցուց նա ինձ ճանապարհին:

—Կ'երթամ, բայց շատ կը տաղտկանամ, —պատասխանեցի ես:

—Ո՛չ, կը զզուիմ ես այդ ինձովքներէն... Գիտե՞ս թէ մը

աղաներ ինչ քրտինք չեն թափեր, որ մէկ անգրոց խօսք, մէկ ան-
կեղծ բառ չ'արտասանեն... Անոնց բոլոր խօսքերը կեղծ ու պատիր
են, շողոքորթութիւն են...

— Եղբա՛յր, թո՛ղ գէթ մի բան խօսեն,— ասացի ես,— կ'ուզես
կեղծ լինի, կ'ուզես անկեղծ... Բայց բանն այս է, որ շատ անգամ
ժամերով լուռ կը մնան ու մարդու քունը կը բերեն:

— Ախր ա՛յդ է, որ շատ չեն խօսեր է՛... չէ՞ ժամանակ պէտք
է, որ իրենց մոտածածի հակառակ մի բան գտնեն ու առն... Դու
չե՞ս գիտեր, որ անկեղծ մարդիկ, սրաերնին մաքուր պահող մարդիկ
միայն շատախօս կը լինեն... Այնու ամենայնիւ դու լաւ դիտի՛ր նոցա
դիրքը, երբ մի կուսակցական ակնարկ ընկեր մէջերնին... Հա, էն
փուճ Եղուարդն էլ այնտեղ կը լինի, դու լաւ ուսումնասիրի՛ր էդ մարդը:

— Ես կը զարմանամ,— ասացի, — որ ամբողջ ժողովուրդը այդապի
դժգոհ է Եղուարդ էֆէնդուց և չեն հեռացնում զայն դպրոցից:

— Եղուարդ էֆէնդին,— ասաց խօսակիցս — ոչ թէ իբրև ուսու-
ցիչ, այլ իբրև մարդ իսկ արժանի պիտի չը լինէր ապրելու, եթէ
մենք շունենայնք մեր ազդակործան կուսակցութիւնները, ժողովուրդն
էլ արդէն գիտես, որ անպիտանին անպիտանն է... Այզպիսի ժողո-
վուրդին ի հարկէ ա՛յգպիսի վարժապետ կը վացելի... Ո՛հ...

Եւ նա անցուց ձեռքն իր ճակատով, կարծես վախնալով որ
զլուխը չը զատուի իր մարմից:

— Գիտե՞ս, ես կ'ամէնամ որ էս բաները կ'ասեմ քեզ, — ասաց
նա քանի մի քայլ անելուց յետոյ — կ'ամէնամ, որովհետեւ ես էլ Վանցի
եմ և դու մի օտարական հիւր ես մեզ մօտ...

Նս բացատրեցի հաջի Պետրոս աղային, որ երբէք զիս օտարա-
կան չեմ համարում, այլ կարեկից եմ Վանցիներին, իբրև իսր հա-
մարիւն Եղբայրներին:

Հաջի Համբարձում աղայ Զլբրնոյեանի տունը արդէն հեռու չէր
և մենք մի քանի քայլ միայն լուռ գնալուց յետոյ՝ հասանք այնուեղ:
Կէս ժամ անցած՝ անցած, հիւրանցը լցւեցաւ լիսունէն աւելի
վաճառականներով: Նոցա մեծ մասը նշանաւոր իշխաններ էին:
Եղուարդ էֆէնդուց զատ, կային նոյնպէս մէկ երկու ուրիշ ուսուցիչ,
ինչպէս նաև մի քանի քահանաց ու վարդապետ: Սենեակը ներկա-
յացնում էր մի երկայն քառակուսի. յատակի վրայ փուած էր գե-

զեցիկ գործը, պատի տակ, որ սենեակի «վերին»՝ այսինքն ամենայարգելի տեղն է, շնչած էր փառաւոր «սաղբը» մի կանգուն լացնութիւն ունեցող թախտը։ Այդ տեղը պատկանում է հոգւոր դասին և սակաւաթիւ ընտրեալ աշխարհականներին։

Չորս անձից զատո, որ ապրի վրայ էին բազմած, մնացած հասարակութիւնը նստուած էր՝ ծալապատիկ կամ չոքած՝ մինդարների («երժանիկ») վրայ։ Նախասենեակի մէջ տեղ էին բռնել ասիական չորս նւազածուները։

Զմեռ էր. բոլոր պատուհանները գոց։ Ծխախոտի ծուխը ամփերով բարձրանում էր դէպի առաստաղ։ Այդ ահաղին բազմութեան մէջ մի մարդ միայն գտայ, որ ծխելու սովորութիւն չուներ և այդ՝ իմ բարեկամ հաջի Պետրոս աղան էր։

Սկզբում այդ ստւար բազմութիւնը նստած էր այնքան խելօք, որ տեսնողը՝ կրթարանի խիսո կարգապահութեան վարժւած մի դասարանի մէջ պիտի կարծէր ինքզինքը։ Ամեն մէկը լուս նայում էր միւսների երեսին ու. ծխում իր սիգարան։ Երբ գալիս էր մի նոր հիւր, աշխատում էին տեղ բանալ նրա համար սենեակի վեր, մէջտեղ կամ վար՝ համեմատ նրա ունեցած նիւթական կարողութեան։ Հիւրը իր տեղը գտնելուց յետոյ, ամենքը թամանդայ անելով՝ «բարի եկար» էին ասում նրան։ Անուհետեւ նա էլ մոռցում էր ամենքից ու ենթարկում միւս մահկանացուների վիճակին։

Ամեն հինգ րոպէն մի անգամ, երկու պատուանի արաղ էին ցըրտում հիւրերին՝ «քիւմկաներով» լեցւած մի մատուցարանով։ Նրանցից մէկը ծառայում էր աջ, միւսը՝ ձախ կողմի հասարակութեան։ Նրանք սկսում էին վերին զվսից ու իջնում կարգով մինչեւ վերջին հիւրը։ Երբ պատահում էր, որ միջաղարդարին հիւր էր գալիս, անմիջապէս օղի էր բերում նրա համար աջակողմեան կամ ձախակողմեան պաշտօնեան, նայելով թէ որի՛ բաժինն էր ընկել այդ նորեկը։

Ամեն անգամ պէտք է անպատճառ արաղ խմողը մի կարճ բարեմաղթութիւն անէ իւր քովը նստողներին, գէթ «կենդանութի՛ն» կամ սկնացնի՛դա ասելով, որպէս զի արժանանայ լսելու չորս կողմից՝ «անուշնե՛ր էլնի, անուշնե՛ր էլնի» խնդակցութիւնը։

Հիւրերի տաղուկութիւնը փարատելու համար, տանտէրը հրաման է տալիս նւազածուներին պարապ չը մնալ և ահա՛ լսում էն նոցա խլացուցիչ դորձիների ու տաճկական երգերի եռանդուն

ձայները: Անզգոյշ հիւրի մէկը աշխատում է խօսք բանալ որ և է հասարակական խնդրի վրայ... Զանազան կողմերից լաւում են խփոյն հակիրճ ու ակամայ կարծիքներ, տագնապը քիչ քիչ պաշարում է «քաղաքագէտներին», կրքերն յուզում և յանկարծ ակաւած խօսակցութիւնը, առանց շարունակելու, թելի պէս կորում:

Այնուհետև մէկը փորձում է խօսել բոլորովին չէզօք նիւթերի վրայ, պատմութիւններ է անում իր պանդխոտութեան տպաւորութիւններից:

—Տաս-տասնըհինսդ տարի առաջ,—ասում է նա,—Երզնկայ եղած ժամանակս, հայի թանկութիւն պատահեցաւ, բայց ոչ թէ ընդեղէնների պակասութենէն, այլ երկու հարուստ յոյների երեսէն...

—Ի՞նչպէս,—հարցնում են սրտատրով քանի մի անհանդիստ անձնաւորութիւններ:

—Այդ երկուքը—նիկոլաքի և Ամսիլաքի կ'ասէին նոցա—քաղքի ամենէն նշանաւոր մարդիկն էին և Կառավարութեան հետն էլ լաւ էին: Դոքա ահազին ցորենի ամբարներ ունէին և զանազան միջոցներով արգելած էին դրաէն ցորեն բերելը...

Նւ միամիտ պատմողը ընդհատեց յանկարծ իր ասելիքը, նկատելով զիմացի քանի մի մարդոց կատաղութիւնը... Հասարակութիւնը երկու որոշ մասի բաժանւեցաւ և ամեն մինը կարծիքներ էր փոխանակում իր մէջ՝ փսխոցով ու դէմքի ծամածութիւններով: Նոքա ամենքն էլ համոզւած էին, թէ պատմողը միտք ունէր խայտառակել իրանց քաղաքում նոյնանման դերեր խաղացող քանի մի անձնաւորութիւններ:

—Տղանե՛ր, արագ բերէ՛ք,—մէջ է մտնում վրդովւած տանտէրը և իր բարեմաղթութիւններով անուղղակի աշխատում է յուղեալ սրտերն հաշտեցնել: Փոխադարձ բարեմաղթութիւնները վերջ են տալիս, ըստ երեւոյթին, այդ միջադէպին:

Բայց պարապութիւնը ձանձրալի է դառնում աղաներին և անհկատելի կերպով սկսում են նորին հին պատմութիւնները: Եղուարդ էֆէնդին գովեստներ է կարդում իր՝ Պօլսոց մէջ քսան տարի առաջ տեսած, բարեկամ Փիլիպոս եպիսկոպոսի վրայ:

—Փիլիպոս եպիսկոպոսը, ասում է էֆէնդին,—դիւղական ծագում ունէր թէև, բայց շատ լուսամիտ ու յառաջլիմասէր էր...

Եւ նկարագրութեան շարունակութիւնը մնում է պատմողի բերանում, երբ նրա աշքին են ընկնում մեծամասնութեան խոժոռւած դէմքերը... Ազաները կարծում էին, թէ էֆէնդու զիլաւոր նպատակն էր վիրաւորել նոյսա կուսակից ինչ ինչ առաջնորդները...

Նորէն մէջ է, մոնում օքնեալ արազը ու նւազածուների մի անոց երգ մոռացնել է տալիս այդ ամենը:

Մինչ այդ քաղաքական ճգնաժամերը տեղի էին ունենում սենեակի վերին մասում, միջին և վարի կարգի հիւրերը արդէն գտել էին իրանց զլխի ճարը: Նրանք չէին ուզում ունենալ ընդհանուր խօսակցութիւն, այլ կազմել էին մասնաւոր ակումբներ: Նրանցից իւրաքանչիւրը բաղկանում էր երկու-երեք հոգուց՝ նառած մի կարգում, բայց երբ պէտք լինէր աւելցնել նաև չորրորդ անդամը — այդ վերջինը նստում էր նրանց առաջ պըլպըզած: Ամեն մի խումբ ուրախ խօսում, վիճում ու տաքանում էր: Երբեմն այնպիսի մի ներքանակութիւն էր մտնում բոլոր այդ խմբերի մէջ, որ ամենքը միասին, մի զարմանալի զուգադիպութեամբ, ահազին քահքահ ու աղմուկներ էին հանում միւնոյն վայրկմնում:

—Թասը կուրիսա՛ւ (էրբու), թասը կուրիսա՛ւ, — ճշաց մի երիսասարդ, երբ առաջին անգամ արդպիսի մի հանրական աղմուկ ելաւ: Բարձր խօսողները անմիջապէս զգաստացան:

— «Թասը կուրիսա՛ւ» ի՞նչ ասել է, — հարցուցի ես զարմանօք կողքիս նստած Պետրոս աղալին:

— Այսեղ որ կանայք բազնիս երթան, շատ անգամ ջրի թասը կը կորսնցնեն ու ահազին աղմուկ կը հանեն... Էսպէս բազմութեան մէջ աղմուկ հանողներին ամշըցնելու համար վթասը կուրիսաւ: Որ ասեն՝ անմիջապէս կը խելացանան, — բացատրեց նա:

Եւ այդ գիշեր ես համոզեցայ, որ յաճախ թասի կորուստը լիշեցնելը վատ բան չէ այդօրինակ խառնաշփոթ իննոցքներում...

Բ.

Սենեակի օդը սաստիկ տաքացել ու թանձրացել էր և մենք ամենքս, երկրի տովորութեան համեմատ, նստած էինք ձմեռւան տաք վերաբուներով: Վառարանի պէտքը շուտուց արդէն չէր զգացում և,

Հիւրերին ազատ շարժում տալու համար, քակել, սենեակից հեռացուցել էին այդ թիթեղեաց գործիքը։ Սիգարի ծուխը, չը նայելով մէկ հատ բաց պատուհանին, թունաւորել էր մեր մթնոլորդը։ Նրեւում էր, որ անընդհատ արաղ խմողներին ամենեին զգալի չէր այդ բանը։ Գլխիս ցաւը բռնեց. ես մոտածեցի ելնել գէմ նախասենեակը և ազատուների քէմին հարցնելու։

—Ասուուած կարողութիւն. տայ, —բարեմաղթեցի ես նրանց։

—Վա՞յ, Ասուուած քէ պախի, էֆէնդի՛, բարո՛վ խազար բարո՛վ, հրամմէ՛ նատի, —հրամիրեց ինձ նրանց պետ Կոր (Էռյը) —Աւանէսը։ Նոքա գեղգեղում էին տաճկերէն օբիր տաշ աթտըմա-ը. ես սկսեցի զննել նոցա գործիները։

Կոր-Աւանէսի ձեռքն էր ասիական հնադարեան քեամանին, Մըկոն փշում էր հովեական սրինգը, Գեօրիկը (Գըֆդոր) նաղարաց էր զարնում, իսկ արծւաքիթ կարմիր-վարդանը դաշնակում էր իր զմայեցուցիչ քառասնաղեաց քնարը։

—Էֆէնդի՛, չե՞ս խնդրար մեր էսա խին թախումի (պարագաներ) վրայ, —հարցուց ինձ Կոր-Աւանէսը՝ երզը վերջացնելուց յետոյ, —կ'ասեն որ Թիֆլիս, է՞ն կողմեր ուրիշ թախումով կը շալեն (Կուտագէլ)...

—Զէ՛, ձեր շալիին շատ անուշ է, բայց լաւ կը լինէր որ քիշ էլ հայերէն երգեր շալէիք...

—Էֆէնդի՛, քե մոռնեմ... մենք չենք ուգե՞ր որ խայեվար տաղեր ասենք, ամմա խացոց տաղերաց մէջ խամ չը կայ, լազաթ չը կայ... Գեօյ հրամանքու տեսար մեր «Թիւրքիները»... խայեվար ո՞ր տաղը կը խասնի մեր «Զէղացիր»-ին, «Աարաց Դանիզ»-ին, «Խաղամբօլդաց»-ին...

—Մեր խայեվար տաղերը, —շարունակեց կոյը խնդրալով —վարժատան տղաների խամար են... Գեօյ մեր նազօ ծառանիդ (Եթ Պրեն) վարժատուն կ'երթաց. ես ինոր մօտէն բիթուն տաղերն էլ սովորաց, ամմա ինտնց մէջ խամ ու խոտ չը կայ, քե մեռնեմ... հազա մենք չե՞նք ուղեր, որ մեր աղգի տաղերն ասենք...

Եւ նա ուղղեց իր կոյը աշերը ճիշա իմ երեսին, կամենալով լսել իմ մոտածմունքը; Ես ամաշեցի: —Եսուեղ հայերէն լաւ երգեր չը կան, —արտասանեցի ես րուկէական տաստանումից յետոյ, —բայց Թիֆլիս, Պօմիս շատ կայ։

—Կասեն, հրաման քե, կ'ասեն, վրաբերաւ նա, —ամմա մենք չենք դիտեր... Կասեն թէ էն տեղեր տաղերը նօթայի կ'առնեն...

—Հմաց չալլընութիւնը լաւ կը բանի՞, Աւանէս ախպէր, —հարցուցի ես —ի՞նչպէս է, լաւ կը շահւի՞ք:

—Սղէկ է գեօյ, աղէկ է... Աստուած մեր ազգի տոնը շէն պախի... ձմրան մէջ զործ շատ կ'էնի, տաճկներաց սուն էլ կ'երթանք... Էսա Մըկո ու Գեօրիկ ծաւանիդ իմ տղաներս են, Վարդանն էլ քւորս տղան է... Խոնք լաւ նալբանդ են, պարապ ժամանակ իրենց սանսաթի (տէնեսոր) կ'երթան... աղէկ է գեօյ...

Կոր-Աւանէսը մի յիսնամեայ պարարտ ու բարեսիրս մարդ էր: Նրա ձայնը, մանաւանդ երիտասարդութեան ատեն, շատ առուշ է եղել և նա դիզած էր մի առատ հարստութիւն: Նա խօսում էր բուն Վանայ բարբառով և «Հօ-ի տեղ միշտ վազ դրժածում»:

—«Զէզայիր», «Զէզայիր» շալէ՞ք, —լսեցաւ հիւրանոցից: Ես մտաց նորէն իմ տեղը գտնելու:

Իմ բարեկամ հաջի Պետրոս աղան երեքդիմեան Կերրերոսի պէտ պահպանում էր իմ տեղս. ես բազմեցաց աջնեղդ:

Սենեակի վերին մասում մի նշանաւոր փոփոխութիւն էր մաել և ամեն մարդ իրաւունք ունէր իր օտարութեան մէջ տեսած մարդոց կենսագրութիւններն անել: Զգալի կերպով նկատում էր, որ անսպառ արադի գողորշները մեզմացուցել էին աղաների կուսակցական փրփուրները: Մասնաւոր խմբերի խառնաշփոխ խօսակցութիւնը, իրանց չարաբասոիկ «թափի» կորուստով, անձանձրով շարունակում էր: Վերին մասում պատմութիւններին լաջորդեցին նաև եւրոպական կեանքի քննադասութիւնները: Խօսք էր բացել կրիստոնութեան վրայ: Եղուարդ էփէնդին թափում էր իր բոլոր պերճախօսական ձիրքերը հերքելու համար ազդ Հակաւետարանական ապահարզանը: Նա օրինակներ էր բերում, թէե մեծ մասամբ սխալ, Անզիայի, նրանսիայի և Կերմանիայի «անբարեկարդ» ընտանիքներից և իր հայեացքները հաստառում էր նոր-Կտակարանի ազդու վկայութիւններով: Տանտէր հաջի Համբարձում աղան և ուրիշ մի երկու անձեր, մեծ պատկառանքով էին ընդունում նրա խօսքերը ու շերմաջերմ պաշտպանում դայն նրա երդուեալ թշնամի—աղաների

դէմ: Քանի մի փոքրիկ խոյբեր, ընդհատելով իրանց ուրախութիւնները, ճպնում էին մի բան լսել հեռուից այդ բարձր նիւթերի մասին: —Աղաննե՛ր, սեղանը պատրաստ է, հրամայեցէ՛ք գնանք միւս սենեակը, հրաւիրեց հաջի Համբարձում աղան, —Նևոնդ հայր սո՛ւրբ, տէր Թովմաս հայր, առաջնորդեցէ՛ք մեղ. . .

Եւ հիւրերի բազմութիւնը, ընկած իրանց հոգեոր հայրերի ետեից, մտաւ մօտակայ մի սենեակ՝ ընթրիք անելու:

Պ.

Այլտեղ պատրաստւած էին երեք հատ պղնձեայ կոր մեծ սեղաններ», զետնից կէս արշին բարձրութեամբ և հիւրերը, շարունակ իրարու «հրամի» ասելով ու «վերին» տեղերը ցոյց տալով շարւեցան նրանց շուրջը ծալապատիկ. Այդ «սեղանները» դրւած էին սենեակի երկայնութեամբ, իրարից մօտ մի արշին հեռու: Այդտեղ էլ հասարակութիւնը բաժանւած էր երեք որոշ գասակարգի. վերի սեղանի շուրջը նստած էին հիւրանոցի վերին մասի ներկայացուցիչները, միջին սեղանի շուրջը՝ երկրորդականները և վերջապէս ցածրի սեղանի շուրջ՝ վարի մասի մարդիկը: Նևոնդ հայր սուրբն ու տէր Թովմասը բազմած էին առաջին սեղանի ճակատը, որով միջոց ունէին դիտելու բոլոր ընթրողների դէմքերն ու շարժումները: Հաց ուտելուց առաջ, հիւրերի ախորժակը բանալու համար, առաջարկւեցաւ մի մի բիւմլայ կօնեակ. . . ևս, ի հարկէ, :ը համարեցի մինչև ընթրիքը խմած արազի զաւաթները, բայց առանց չափազանցութեան կարող եմ ասել, որ նրանց թիւը, հիւրերի մեծամասնութեան համար, քսանից պակաս չեր...

Ընթրիքի միջոցին արտասանւեցան քանի մի ճառեր, որոնցից շատանում եմ դնել այստեղ միայն երկուքը:

—Գաւաթները լեցուցէ՛ք, —առաջարկեց Եղուարդ էֆէնդին:

—Եղբայրնե՛ր, —ասաց նա մի հանդիսաւոր ձայնով —ամեն ժամանակ և ամեն երկրի մէջ իշխանների դասակարգը եղած է մի անհրաժեշտ արր ժողովրդի բարեկեցութեան. . . Եշխաններն են, որ իրանց լսելքով ու հեռատեսութեամբ կ'աճապարեն առաջն առնել իսեղն ու թշւառ ժողովրդի մը —ինչպէս են մեր սիրելի Վանցիք —

ամենաաեսակ տագնաապների... Նոքա են, որ առողջարար սպեղանի կը դնեն մեր դժբաղդ հայրենակիցների անրուժելի վերքերին... Մեծ բարեբաղդութիւն է, ճշմարիտ, տեսնել այս պատւական ու ազնիւ յարկի տակ, մեր նշանաւոր ու սիրելի իշխան-աղաների յաճախակի համախմբումը, որ չէ կարող իր բարերար հետևանքները չունենալ... Այս համախմբան և փոխադարձ սիրոյ պատճառը—կը համարձակիմ ասել—մեր ամենիս սիրելի ու մեծանուն համբարձում աղայ Զըրնոցանն է, որի ազգասիրութիւնը, բարեպաշտութիւնը, արդարասիրութիւնը ու ամեն մեծամեծ առաքինութիւնները—կը խնդրեմ՝ Ամենակարող Ցիրոջմէ—թո՛ղ անպակաս ու անվախճան լինին ազգերնուս մէջ՝ դարուց ի դարս... Աւրեմն, եզրա՛րք պատւականք, —վրաբերաւ նա մի առանձին ոգեւորութեալր—պարպե՛նք այս գաւաթը ցյատակ՝ մեր սիրելի համբարձում աղայի և նրա համայն գերդաստանի կենացը. . .

Օղը թնդաց ծափահարութիւններով (ծափահարելը արդէն 10—12 տարի է, որ մուտք է գտել այնտեղ) և էֆէնդու առաջարկութիւնը կատարեցաւ: Բայց շատ հեշտ էր նկատել, որ ծափահարութիւնների երեք քառորդի բարովին ակամայ ու արհեստական էին: Քառորդ ժամից յետոց, հաջի համբարձում՝ աղան մի բաժակ գինի առնելով, ոտքի կանգնեցաւ:

—Դուք դիտէք, աղանե՛ր, որ ես խօսելու շնորհք չունիմ...
—Քա՛ւ լիցի, քա՛ւ լիցի,—լսւեցան քանի մի ձայներ:

—Այդ ձեր ազնւութիւնն է, որ ազդէս կը թելադրէ ձեզ, բայց ես շատ խեղճ եմ խօսելու մէջ... Միայն թէ ես կ'ուզեմ իմ պարտքս կատարել... Փոքր ինչ առաջ մեր յարգելի եղուարդ էֆէնդին, իրեն յատուկ սրտառուց ու ազնիւ խօսքերով, ծառաներուդ (իբ) կենացն առաջարկեց... Թո՛ղ ներւի նւաստիս էլ փոխադարձ բարեմաղթութիւն անել մեր սիրելի և շնորհալի էֆէնդուն. . . Տա՛յ Աստուած, որ նրա հանճարը, պերճախօսութիւնն ու գիտնականութիւնը աւելի և աւելի զարգանաց ի վայելուն մեր տառապեալ ժողովրդի և ի փառս Աստուծոյ... Յայսնի է ազնիւ աղաներիդ, որ յարգելի է ֆէնդին մի փայլուն դոհար է մեր ուսուցիչների մէջ... Նա մեր դաւաճների աղն է... Նա շատ անգամ խօսք կը բանաց այնպիսի նիւթերի վրայ—ինչպէս առիթ ունեցանք տեսնելու այսօր—որոնց մա-

սին, կը համարձակիմ առել, մեզմէ շատեր բնաւ գաղափար չունին... Ռւրեմն մաղթե՞նք մեր ազնիւ էֆէնդուն շաս երկա՞ր օրեր, պարպե՞նք յոտնկաց այս դաւաթը մինչև վերջին կաթիլը...

Նորէն սենեակը թնդաց ծափահարութիւններից և ոտքի ելած բազմութիւնը քամեց ցյատակ գինու բաժակները: Բաց երբ նրանք նստան, ես տեսայ բարկութիւնից կծկւած ու դունատ շատ մարդոց երեններ, իսկ վարի սեղանի քանի մի երիտասարդներ արդէն մի խոր քրքիջ էին հանել այդ վեճնացիս մասին:

Հացէն վերջ, բազմութիւնը յետ քաշւեցաւ ու շարւեցաւ պատի տակի մինդարների վրայ: Զըրնոցեանի մէկ տղան և մէկ ուրիշ երիտասարդ երկու կոնք ջուր բերելով չոքեցան կարդով ամեն մէկ հիւրի առջեւ ու ծառապում էին նրանց՝ ձեռքերը, բեղերն ու բերանը լւանալիս նւրաքանչիւր հիւր, լացումը աւարտելուց յետոյ, լսում էր չորս կողմից ամարսողակա՞ն, մարտողակա՞ն խնդակութիւնը: Այնուհետեւ նրանք մոնում էին նորից ընդարձակ հիւրանոցը: Վկանեղ մի մի «Փինջան» գառն սուրճ խմելով, հասակաւոր աղաներից մի քանիսը և երկու հոգևորականները հրամեշտ տեին տան տիրոջ: Նուազածուները հրաւիրւեցան հիւրանոց (հիւրանոցի) ու զետեղւեցան նրա մի անկիւնում:

Հացէն վերջ ամեն մարդ յոդնած է լինում և աւելի արամադիր երաժշտութիւն լսելու: Հիւրերը նստեցան այդ դրութեան մէջ մօտ մէկ ժամ և երբեմն թոյլ էին տալիս իրանց միայն փոքր կատակներ անել իրարու:

— Պետրո՞ս վարժապետ, դու մայէ՞ր (մէ՞նէ) էսա տեղն ես եղեր, — հարցուց խնդարով մի ցիսուն տարեկան ուսուցչի նրա դիմացը նստող մի վաճառական:

— Հրաման քե, վարի կողմն էի նստած, — պատասխան տւառ վարժապետը լրջութեամբ:

— Խնչալէ՞ս եղաւ, վարաներդ առի՞ր...

— Զէ՞, չ'առի...

— Քանի՞ ամսական կը պահանջես:

— Տասնըմէկ:

— Կ'առնես գեօյ, աջալա մի՛ աներ... Փարան ի՞նչիդ է պէտք...

— Խնչպէս թէ «ի՞նչիդ է պէտք»... ընտանիք ունիմ, տղաներ ունիմ, — վրաբերաւ Պետրոս վարժապետը յուզւած:

— Կը շահւիս գեօյ, — շարունակեց վաճառականը իր պաղ հեգ- նութեամբ — աշակերտներից փշուր-մշուր կը տանես, տղաներիդ կ'ու- տացնես...

— Եօ ախպէ՛ր, ի՞նչ փշուր-մշուր... Հիմայ առաջւան ժամա- նա՞ն է, որ փշուր տանեմ... Ես ամեն օր ֆրնէն հաց կ'առնեմ...

— Ալորիթ ասա՛, վարժապէ՛տ, հիչ օր կը պատահի՞ որ անօթի մնաս ու ծոմ պահես, — շարունակեց նորէն գրգուելնրան վաճառականը:

— Եոմ չի պատահեր, բացց ցամաք հաց ուտել շատ կը պատահի...

— Հերի՛ք է գեօյ... վարժապետին ի՞նչ կը վացելի կերակուր ուտել...

— Խնչու, ախպէ՛ր, վարժապետը երկա՞թ է որ... զուսաց նա այնպիսի մի յուզմունքով, որ ամբողջ հասարակութիւնը փոթկաց խնդրալուց:

— Ի հարկէ երկաթ է, — պատասխանեց ամենացն պաղութեամբ վաճառականը — վարժապետը որ երկաթ չը լինի՝ կարո՞ղ է 300 տը- դայի գլուխը բան մոցնել...

— Երաւո՛ւնք ունիս, — յոդոց հանեց վարժապետը և ճիշտ իր ոտոխի աշքերին նայելով կրիսեց արտասուալից. «իրաւո՛ւնք ունիս...

նորից ծիծաղեցին ամենքն ու անցան ուրիշ կատակների...

Վերջապէս հասաւ կէս գիշերը և հիւրերը ոտքի ելան մեկնե- լու: Ձեռքս մոցուցի պատահմամբ վերարկուիս գրավանը և ապշելով տեսաց, որ մոռցած էի վերցնել մեր մեծ դրան բանալին:

— Մի դժբաղդութիւն է պատահել ինձ, — ասացի ես կամաց հաջի Համբարձում աղային — բանալին թողել եմ սենեակումս, մեր անեցիք մուափում են հիմայ խոր քնի մէջ...

— Երանի քեզ ամեն ժամանակ ացդ դժբաղդութիւնը պատա- հի, — ասաց նա մի սիրալիր ժպիտով ու ձեռքս բռնելով, նասեցուց տան ըսադրիս վրայ: Դու կա՛ց այսուղ, — աւելցուց նա ու իջաւ հիւ- րերի հետ մինչև փողոցի դրուբ:

Յետոյ նա անկողին ձգել տեղ ինձ համար այն փոքր սենեա- կում, ուր նա ընդունւմ էր սպորտաբար իր մասնաւոր հիւրերին և ուր մնում էր ինքը առաւօտներ ու երեկոներ՝ նախ քան ննջարան

Երթալլ: Այդ սենեակը ձմեռային էր, զի մեծ հիւրանոցում յաճախ նստելու համար պէտք կը լինէր առատ փայտ, որ մի քէ՛ հածելի չէր մեր պարոնին:

— Բարի՛ գիշեր, — ասաց նա ինձ, հրաժեշտ տալով — կը խնդրեմ հանդիստ քնանաս, առաւօտ շուտ չ'ենես: Ես կը պատուիրեմ, որ առաւօտ վառարանը վառեն ու սամօվարը ձգեն: Ես էլ քաղաք շուտ երթալու չեմ, չայ կը խմենք ու բոլ կը խօսենք:

Ծնորհակալութիւն յայտնեցի նրան ու պատկեցայ:

Պա.

Առաւօտեան կողմ, ես կարծես թէ երազիս մէջ մի ինչ որ թրիսկոց լսեցի: Աչքերս ակամայ բացւեցան ու լսեցի Համբարձում աղայի ձայնը, որ կշտամբում էր իր փոքրիկ աղջկան: — «Գետի՞նն անցնելու, ասում էր նա, — զու շտեսնե՞ս, որ էստեղ մարդ կայ քնած. ի՞նչ իշու պէս փեսերը կը թալես գետինս:»

Հասկացայ, որ փոքրիկ Մաքրուհին փայտ էր բերել վառարանի համար և նզովելով բերողին էլ, հրամայողին էլ, պինդ կերպով աշքերս գոցեցի ու միտքս դրի որ էլ ոչ մէկ թրիսկոցի համար քունս չը խանգարեմ: Խակ իմ արթննալս արդէն ոչ ոք չ'իմացաւ, զի ես պառկած էի սենեակի մի անկիւնում, երեսս պատի կողմն արած: Հաջի Համբարձումի ձայնից կարելի էր գուշակել, որ նա նստած էր ճիշա իմ հակառակ կողմի պատի ստակ՝ վառարանի մօտ:

— Խեղճ աղջիկը չգիտէ թէ ի՞նչ թշնամութիւն կ'անի մեղ՝ առափթ տալով մեր հիւրին զարթնելու, — լսեցի ես անմիջապէս մի նոր անձի թիւրքերէն խօսքերը և առանց տարակուսելու, հասկացայ որ այդ նոր անձն էլ մեր ծանօթ նդուարդ էֆէնդին է:

Մէկ հատ աչքերս խոշոր կերպով բացի, որ փոքր ի՞շատէ գուշակեմ թէ առաւօտեան ինչ ժամանակն է և ես համոզւեցայ որ նոր էր լուսացել: Այդ բանի ապացոյց էր թէ՛ սենեակի աղօտ լոցը և թէ՛ իմ քնազուրկ աշերը: — Այստեղ մի նշանաւոր բան կայ, — մրտածեցի ես ու վճռեցի, ինչ որ լինի, յաղթել իմ քնին:

— Զէ, նդուա՛րդ, արտասանեց զայրովթով ու կամաց ձայնով հաջի Համբարձում աղան, — ես կը նկատեմ որ դու մեր գործիօ հա-

մար հետզհետէ անպէտք ու վնասակար պինի դառնաս... Բայց լաւ մոռածիր. ևօն փիւշմանլրք աքչէ էժմագը...¹⁾

— Այսր Համբարձում աղայ, — պատասխանեց Եղուարդ էֆէնդին լացի ձայնով, — դու որ այդպէս կ'ասե՞ էլ ես ուրիշին ի՞նչ ասեմ... էլ ասկէ աւելին աշխատելը չեմ գիտեր թէ ի՞նչ պէտք է լինի... Զեր գործին համար ես կը մոռանամ զաւակներս, անձս, հոգիս, խիղճս...

— Կ'աղաշեմ՝ «խղճովդ» մի՛ վախցներ ինձ... Զըրնոյեանը այնքան յիմար չէ, որ խիղճ ունեցող մարդուն իրեն գործակալ անի... Ես հազար անգամ քեզ ասել եմ, որ մարդու հետ խօսելու ժամանակ, մի՛ մոռնար թէ ո՞ւմ հետ գործ ունիս... Ի՞նչ, Զըրնոյեանը քո անխելք վարժապետներէ՞ն է, որ էդպէս դարտակ բառերով խարես... Շիրջճս կը ծախս' մ», — արտասանեց նա մի կծու հեղնութեամբ, ճիշտ էֆէնդու լացի ձայնով:

— Հաւատա՛, հաւատա՛, Համբարձո՛ւմ աղայ, — ասաց վերջինը մտերմաբար — շաբթուս մէջ մի քառասուն մարդու հետ խօսել եմ Թաղականաց ընտրութեան մասին, բայց ոչ ոք կարևորութիւն չի տար ինձ... դու գիտես, որ թշնամիներս ծովի աւազից շատ են...

— Ինչո՞ւ, ա՛ մարդ, ինչո՞ւ. որտեղէ՞ն են այդ թշնամիները, — հարցուց նա բարկացած:

— Ինչպէ՞ս թէ որտեղէ՞ն, դու չե՞ս գիտէր ո՞րտեղէ՞ն... Էն որ Պողոսեան²⁾ են՝ արդէն մինչև մահս արիւնս պիտի ծծեն, իսկ մնացածներն էլ արդէն քո պատճառով կը հալածեն զիս...

— Ինչպէ՞ս թէ իմ պատճառով, — գոռաց Համբարձում աղան մի ահոելի ձայնով:

— Կամաց խօսի՛ր, Համբարձում աղայ, կամաց խօսի՛ր... — արտասանեց էֆէնդին լացի ձայնով, — հապա դու չե՞ս գիտեր, որ ամեն տեղ ինձ երեսիս կը տան, թէ Զըրնոյեանի գործիքն ես...

— Սո՛ւս կ'ասես, — գոռաց նորից վաճառականը՝ ամբողջ մարմնով բորբոքւած: Դու շա՛տ յիմար ես, գիտե՞ս, Եղուա՛րդ, — շարու-

1) «Վերջը զղջալը մի կոպէկ չաբժէ»:

2) Վանում քառասուն տարուց ի վեր գոփութիւն ունին Պողոսեան և Ապօղոսեան անհաշտ կուսակցութիւնները, որոնցից առաջինները լետաղիմական, վերջինները առաջաղիմական են համարւում:

նակեց նա մի բոլէից յետոյ—քեզ կ'ասեն թէ իմացիր ո՞ւմ հետ
գործ ունիս... Զըրնցեանը մօրուքիդ ամեն մի մազը ուսումնասիրած
է, գիտե՞ս թէ չէ; Բայց ո՞րին կ'ասեմ—ասողին լող պիտի... Այս
ես չը կըցայ քո դլուխ բան մտուցել է... Աննայանա՝ սիվրի սինէք
սազ, աննամայանա՝ դաւուլ զուրնա ազա...¹⁾

—Խնչո՞ւ, Համբարձո՞ւմ աղայ, ես քո ո՞ր մէկ խօսքդ չը կատա-
րեցի, —ասաց Եղուարդը հարատահարեալի մը փաղաքշական ձայնով:

—Ալլա՛հ, Ալլա՛հ... Խո մա՛րդ, դու խե՞նթ ես, ի՞նչ ես...
քեզ ո՞վ կ'ասի որ իմ մէկ խօսքը կատարելու համար ամեն ցիմա-
րութիւն ձեռքդ առնես... Ես քեզ կ'ասեմ, որ քաղաքագէտ լինիս,
համբերող լինիս... Ես քեզ կ'ասեմ, որ այս ինչ մարդու դէմ փոս
փորես, բայց դու կ'ուզես, որ անպատճառ այդ փոսը մէկ աւուր մէջ
փորես ու ինքդ ամենայն ցիմարութեամբ մէջն ընկնես... Այս փոսն
այդպէս չեն փորեր, է՛. «Կույու կազարստն՝ բօյունջա կազ, զիրա էլ
իշին կազսան՝ քէնդին դիւշէրսանն...²⁾

—Սցդ ճիշտ է, որ ես քիչ անհամբեր եմ...

—Բայց այդպիսով իմ տունս կը քանդես է՛, Աստուած. քո տունն
աւեր չ'անի, —բարկացաւ նորէն Համբարձում աղան.—աշխարհիս մէջ
ամեն բան համբերութեամբ ու քաղաքագիուութեամբ ձեռք կը բե-
րւի. մարդ կաչ, որ թագէով աղւէս չի կարող բռնել, բայց մարդ
էլ կայ՝ որ սապով կը բռնի, բայց դրա համար պէտք է աղւէսին
կամաց կամաց ու օրերով յոզնեցնել... «Սարր իլէ կօրուք հալ-
վա օրուր, թութեափրազը՝ ատլատ»³⁾ —ի զուր չէ ասում թիւրքը...

—Ճի՛շտ է, Համբարձո՞ւմ աղայ, ճիշտ է, —հաստատեց Եղուարդ
էֆէնդին. —«Ճէփանըն սօնու՝ մէփա զըրը...⁴⁾

—Խո մա՛րդ, որ էդ բաները գիտես էլ ինչո՞ւ այդասփ անխել-

¹⁾ «Հասկացողի համար ճանձի բզզոցն էլ երաժշտութիւն է, անհաս-
կացողի համար՝ թմբուկն ու զուրնան էլ քիչ է»:

²⁾ «Փոս ես փորում՝ հասակին չափ փորիր, թէ չէ եթէ միան ձեռ-
քի համար փորես՝ ինքդ մէջը կ'ընկնեա»:

³⁾ «Համբերութեամբ աղոփը կարելի է հալվա դարձնել, թթի տերեւը՝
ատլատ»:

⁴⁾ «Նեղութեան հետևանքը ուրախութիւն է լինում»:

քութիւններ կ'ամեն, ինչո՞ւ ամեն մարդու կը վստահանաս կարծիք-ներդ յայսնելու... Տաս տարեկան տղան չի անիլ այն, ինչ որ դու կ'անես... Բաւական է որ ազաբսըզի (անմօնէլ) մէկը քեզ ասէ թէ այս ինչ մարդը վատ է. դու անմիջապէս թափ կը տաս քո ամբողջ գիտցածը այդ մարդու վրայ... Ել չես մտածեր, թէ կարելի է եկել են քեզ փորձելու, լրտեսելու... Եւ միւս օրն իսկ կ'իմանանք թէ Եղուարդ էֆէնդին կայֆէի (սրբառն) մէջ այս ինչ մարդու վրայ այսպէս ու այնպէս է խօսել... Ամէլցի՛ր, եղբա՛յր, ամէլցի՛ր, տղայ չես որ քեզ ամեն օր խրաս տամ...

Եղուարդը լուր մնաց այդ մսսին:

— Բայց այդ բաւական չէ, — շարունակեց Համբարձում աղան, — յաճախ դու իմ անունս էլ կը լիշես, իմ՝ կարծիքներս էլ կը յայսնես այդ լրտեսներին...

— Սուտ կ'ասեն, Համբարձո՛ւմ աղայ, — վրաբերաւ էֆէնդին յոզւած:

— Նալա՛թ քե չար սատանայ... Ծօ մա՛րդ, նորէն դու այդ լեզուով կը խօսիս... Ծօ՛, քե՞զ չեմ ասեր որ ինձ խաբել չես կարող... Ծօ, դու Աւետիս վարժապետին ի՞նչ էիր ասեր...

— Ի՞նչ էի ասեր:

— Դո՞ւ չէիր ասել թէ Համբարձում աղան կ'ուզի Յովհաննէս վարժապետին վարժարանէն. Հանել տալո...

— Հա՛, ճիշտ է, այդ ասեր եմ...

— Ասե՛ր ես, հա՞... Բայց մենակ է՞դ... Դու Յովհաննէս վարժապետին էլ չէիր ասեր թէ Համբարձում աղան կ'ուզի Աւետիս վարժապետի հին ամսականները յետաձգել տալ, իբրև թէ նրա՝ Պօղոսեաններին մտերմութիւն ցոյց տալու համար...

— Զէ՛, այդ չեմ ասեր...

— Ասե՛ր ես...

— Չե՛մ ասեր, Համբարձո՛ւմ աղայ...

— Որ չես ասեր, ես այս րոպէիս մշակն (ծառաւ) ուղարկեմ Յովհաննէս վարժապետի յետեւէն, թո՛ղ գայ երեսիդ խօսի...

— Համբերի՛ր, քիչ մտածեմ, կարելի է որ մոռցեր եմ... Հա՛, իմացայ, — վրաբերաւ նա ուրախացած, — ես նրան ճիշտ այդպէս չեմ ասեր...

— Հապա ի՞նչ ես ասեր։
 — Ես նրան ասեր եմ թէ՝ «Համբերի՛ր, տեսնե՞նք Համբարձում աղան պիտի մարսեցնէ» Աւետիս վարժապետի արածները...
 — Ցիմա՛ր դու, վիմա՛ր... Եւ ի՞նչ, դու առանձին առանձին այդ երկուքին իրարու դէմ կը գրգռես ու քեզ հետ կը միացուցես Վերջը գաղտնիքը կը բացուի ու երկուքն էլ միանալով քո դէմ՝ Թաղականութեան բողոքներ կը տան... Ովէ այստեղ մեղաւոր. ե՞ս, թէ դո՞ւ. «Էշմա, բուլմա» ¹⁾... Դու չե՞ս գիտեր որ «հեր քէս իդէր քէնդինէ, զի՞նէ քէնդինէ» ²⁾... Զէ, ես այս բաների վերջը քէնդինէ, զի՞նէ քէնդինէ... Ես քեզ մի՛շտ, — ասաց նա կատաղութեամբ այդ սիշտուրաու շեշտելով, — չեմ թողներ որ մարսես էդ բաները... Ինձ Զըրնոյեան կ'ասեն...»

Եֆէնդին նորէն լոեց։ Համբարձում աղան ոտքի ելնելով, մօտեցաւ կամաց իմ անկողնին ու նայեց կէս երեսիս։ Ես, ի հարկէ, ցոյց սուսի իմ վասաղղ քունը։

— Դա ուշ կ'արթննայ, իր սովորութիւնն այնպէս է, — ասաց նրան կամաց էֆէնդին, թերեւս նրա սիրաը քաղցրացնելու համար։ Համբարձում աղան անցաւ դարձեալ դիմացի կողմը և, բանալով դրացի սենեակի դուռը՝ «Մաքրուհի՛, սամօվարը բե՛ր», հրամացեց։ Տաս տարեկան Մաքրուհին բերեց ջրով լիքը փոքր սամօվարն ու գնաց։ Հաջի Համբարձում աղան լեցուց նրա մէջ վառարանի կրակն ու նստաւ նորէն իր տեղը։

Դարձեալ տիրեց լոռութիւնը։

— Գիտե՞ս, ախսպէր, սկսեց քիչ յետոյ Զըրնոյեանը, — ես հիմա ժամանակ չ'ունիմ այդ բաներով զբաղւելու, աբդ թողնե՞նք ուրիշ ժամանակի... Բայց քեզ ալստեղ կանչելու նպատակս էր, որ տեսնես անպատճառ այսօր կամ վաղ այն մի քանի մարդոց, որոնց մասին խօսել եմ քեզ։ Նոցա կը յայտնես իմ կողմից, որ այս կիրակի Թաղականաց ընտրութեան մէջ Պողոսեանները պիտի շահին անպատճառ։ Հետեապէս թո՛ղ նրանք իրենց պատրաստած մարդիկը բերեն եկեղե-

¹⁾ «Մի՛ անիր, մի՛ գտնիր (պատիփը)»։

²⁾ «Ամեն մարդ ինքն է անում իրան (վնաս), էլի՛ ինքն իրան»։

ցու գաւիթ և քուէարկութիւնը կատարելուն պէս՝ յարձակուին քուէտուփի վրայ ու ջարդուփշուր անեն... Այսնոցա կ'ասես ի մ կողմից, կը հասկանա՞ս...

—Հրամեր էք, հրամեր էք...

—Բայց քո կողմից,—շարունակեց նա, —դու կ'աւելացնես, թէ այդ լնարաւողները բոլորովին անպէտք մարդիկ են, կաշառակեր են, ժողովրդի համար մոտածող չեն և այն... Խնչ որ դու յարմար կը դատես: Նոցանից դու երկիւղ մի՛ ունենար, նոքա «մեր» մարդիկն են, վասահելի են, բայց թէ ինչու ես այս բանը քո միջոցով կ'անեմ և ոչ թէ ինքս անձամբ՝ այդ արդէն քեզ հազար անգամ՝ բացարել եմ...

Ես շատ էի ցաւում, որ չէի իմանում այն բաները, ինչ որ համբարձում աղան նրան «հազար» անգամ ասել ու բացատրել էր, բայց նրա յետագայ խօսակցութիւնը բաւականին լոյս ձգեց այդ հանելուկների վրայ:

—Լաւ հասկացի՛ր ու գլխիդ մէջ մոցո՛ւր, —ասաց նա վոքը ինչ յետոց նդուարդին, —լաւ հասկացի՛ր թէ ի՞նչ է իմ ծրագիրը: —Զըրնոցենց տան ոյժը պիտի մեծնայ ու ծաւալի բոլոր Վասպուրականի մէջ: Մեր անունը պիտի բարձրանայ, քանի ես կենդանի եմ, իսկ իմ մահից յետոց կը յուսամ թէ տղաներս—շնորհիւ իմ իրենց տւած դաստիարակութեան—պիտի չը շնդին իմ բունած ճանապարհից... Դու գիտես որ մեր երկրի մէջ առանց փարացի անուն հանել, հըռչակել՝ անհիմն ու անկարելի բան է. ուստի իմ առաջին ու ամենամեծ նպատակս է հարստանա՛լ: Կը հասկանա՞ս՝ հա—ր ըստա—տա—նա՛լ... Այդ է ամենամեծ ոյժը մեր աշխարհի մարդոց: Հարյատութեան առաջ անզօր են քո բոլոր քաղաքակրթութիւնը, գիտութիւնը, պերճախօսութիւնն ու միւս բոլոր դարտակ ու անօթի խօսքերը... «Չըթ չըթ էտան նալչա դըր, իշ բիթիրէն աքչէ դըր»¹⁾ այս լա՛ւ հասկացիր: Այս նպատակիս հասնելու համար ինձ օգնող հարկաւոր չէ. թէ՛ իմ առևտրական ձեռնարկութիւններս, թէ՛ գիւղական գործերս և թէ կառավարութեան կապաններս ըստ ամենայնի գոհացուցիչ են և չի անցնի քանի մի տարի՝ ես կը լինիմ տէր հազարաւոր ոսկիների...

¹⁾ «Չըթ չըթ էտան նալչա դըր, իշ բիթիրէն աքչէ դըր»՝ Գրամը»:

— Աստուած յաջողութիւն տա՛յ — վրաբերաւ այդ ոսկիներով
յափշտակած նդուարդ վարժապետը:

— Աստուած ոչ ոքին յաջողութիւն չի տար, — ընդհատեց նրան
կծու կերպով Համբարձում աղան — դու միայն լա՛ւ լիր թէ ինչ
կ'ասեմ... — Այն ժամանակ ևս կը լինիմ առաջին մարդը Վանաս մէջ
ու կ'իշխեմ ամբողջ աշխարհի վրաց...

— Սամօվարը եռաց, սամօվարը եռաց, — ընդհատեց նրան իր
խօսակիցը:

Զըննդիքանը ընդհատեց իր խօսքը, չայ լիցուց չայսամսնի մէջ
ու սամօվարի ջուրն էլ աւելցնելով, յետ քաշեցաւ իր տեղ:

— Բայց արդեօք այս մեր հիւրը արթննալու միտք չունի^o, —
հարցուց նա նդուարդին:

— Աւելի՛ լաւ, — պատուախանեց ուստոցիւը — դու վերջադր՛եր
խօսելիքդ:

«Համբերի՛ր» — ասաց Համբարձում աղան ու պինդ հազաց երկու
անգամ: Ես, ի հարկէ, տեղիցս չը շարժեցաց: Նա առեց ունելիքը
ու պինդ զարկաւ գետնին, որպէս զի իմ քնած լինելը առուգէ:
Ես միայն խնդացի մոքումն այդ «քաղաքադէտի» միամութեան վր-
րաց ու շարունակեցի անվրդով քունսա:

— Երկրորդ մեծ նպատակս, որին կը ձգտեմ, — դարձաւ նա դեպի
էկֆէնդին — այդ՝ իմ թշնամիների ոլուկը ջարդեն է... Ես այդ մասին
միշտ յաջողութեան մէջ եմ եղել, բաց ոչ քեզ պէս անշնորհք ու-
անտաշ կերպով... Կուզե՞ն թշնամուդ հարւածել՝ այնպէս ուղղիր
սլաքդ, որ նա չ'իմանայ թէ ո՞ր տեղից կուգաց նա... Ֆայրայե՞ղ
զգուշութիւն... Թշնամիս քսան աչքով կը դիսէ ինձ. առու ուլուր,
տիւշման ույսումազ»¹⁾ — կը հասկանա՞ս, վարժապե՞տ: Ախ... ար-
տասանեց նա աստամերը կոճուացնելով — ե՞ս պիսի չը թողնեմ, որ
նրանք ուրախ օր անցունեն... Թո՞ղ շարունակեն իրենց ավքիարը.²⁾
Նրանք ինձ յաղթել չեն կարող... Ես նրանց արիւնը պէտք է խանչ,

1) «Զուրը կը քնի, թշնամին չի քնի»:

2) «Աֆքիար» արաբերէն բառը խսկապէս «մուքեր» է նշանակում,
բայց տաճկատանցիք դործ են դնում զան ալրէժինդրութիւն» բառ ի տեղ:

երուա՛րդ, ա-րիւնը՛... Դինսիզին հակընտան իմանսըզ գեալիր՝¹⁾— նրանք դեռ ինձ չեն ճանաչեր...

Այդ վերջին խօսքերը արտասանելիս՝ նա փոխեց բոլորովին իր ձանը ու աւելի մըրմոռում էր արջի պէս, քան խօսում:

Բայց ես այլ ես անկարող էի մի կողքի վրայ պառկած մնալ- ես փորձեցի, քնած երես նոցա ցոյց տալով, շուռ գալ միւս կողքի վրայ ու վերժակը զիմիս քաշել: Այդ պատահեցաւ Համբարձում ա- զայի ճիշտ վերջին խօսքերի վրայ:

—Ո՞ստ... —արտասանեց Եղուարդը, երեկի իր խօսակցին իմ շուռ գալու մասին ակնարկելով:

Զըրնոցեանը լուեց ու սաքի ելնելով մէկ երկու անգամ պինդ պինդ անցաւ սենեակի մէջ ու հազաց: Յետոյ մօտեցաւ ինձ:

—Պ. Փիրումեա՞նց,—ձայնեց նա:

—Պ. Փիրումեա՞նց,—կրկնեց նա աւելի բարձր.—Ճայն պատրաստ է, կուզէ՞ք ելնել:

ՊՊ. Փիրումեանցը իր խելքն հացի հետ չի կերել,—ասացի ես մաքիս մէջ,—որ քեզ հիմաց պատասխան տաց:

—Թորայ թէ Փիրումեանցը այսօր արթնալու միտք ունենաց, — դարձաւ նա Եղուարդին—մեռելի՞ քուն է այս, ի՞նչ է...

—Քեզ ասի, որ նրա սովորութիւնն ացրպէս է, —պաշտուանում էր ինձ խեղճ էֆէնդին, —նա գիշերը ուշ կը պառկի, առաւոտ ուշ կ'ելնէ. շատ անգամ մինչեւ կէսօր կը քնանաց...

—Ծօ՛, ջայնա՛մ նրա գլուխ, պատասխանեց Համբարձում աղան- չայն ափսոսս կը գայ... Արի՛ մի մի գաւաթ խմե՞նք, յետոյ արթնաց- նենք: Ես էլ քաղաք պիտի երթամ, կ'ուշանամ:

Եւ նա նստաւ նորէն՝ չայ շինեց:

Ե.

—Եարտնակի՛ր, հաջի՛ աղայ, —խնդիր էֆէնդին, չայն կուլ տալով:

—Դու գիտես, որ իմ դիմաւոր թշնամիներն են նախ՝ էն ա-

¹⁾ «Անհաւաստին անկրօնը կալող է լաղթել (լնառել):

տաբսըզ Պօղոսեանները. երկրորդ՝ քանի մի ննշանաւոր կոչւած Ապօղոսեանները: Բայց նոքա կը սխալին. Զըրնոյեանը նրանց ակուեքի նարջը չէ... ևս չեմ թողներ, որ նրանք առաջ երթան... Կեցցէ՛ Սահմանադրութիւնը. դու զիտես որ թշնամիներէն վրէժ առնելու համար էդ անտէր Սահմանադրութիւնէն լաւ բան չկաց... Խոչ կը կարծես. իմ գործերս թողած՝ ևս Քաղաքական ժողովի կամ ուրիշ ազգային գործերի մէջ ձրի պաշտօններ կը վարեմ... Խե՞նթ եմ ես, ի՞նչ է... Բայց այդտեղ ես ունիմ իմ ահազին հաշիւները. ես չեմ թողներ որ թշնամիներս պաշտօններ ունենան, ժողովրդի վրայ ազգի կարողանան և ես կը յաջողեցնեմ միմիան իմ մարդոց ընտրութիւնը: Եւ այդ վիճ մարդիկը պիտի շատնան օրէցօր՝ հարատութեանս համեմատ...

—Այդ մասին բնաւ տարակոյս շունինք,—վրաբերաւ ուրախութեամբ ուսուցիչ:

—Ի հարկէ,—պատասխանեց մի դառն հեզնութեամբ Զըրնոյեանը—ի հարկէ, երբ քեզ պէս քաղաքագէտա օգնականներ ունենամ...

Եղուարդ էֆէնդու անքաղաքագիտութիւնը նորէն բորբոքեց հաջի Համբարձումին: Այդ առիթով նա հարկ համարեց պարզել իր հացեացքը իր գործիք—օգնականների վրայ: Նա ասում էր թէ ազգային ժողովներում վիրա մարդոց ընտրութիւնը յաջողցնելու համար պէտք էր նրան պրօտաղանդայ անել իր թշնամիների դէմ՝ ժողովրդի, պէտք էր նրան պրօտաղանդայ անել, զի այդպիսիկ դասի մէջ: Այդ բանը նա չէր կարող անձամբ անել, զի այդպիսով իր վիրքը նուաստացուցած կը լինէր նոցա աչքում: Ուսողի պէտք էին նրան ժողովրդին մօտիկ ու հասարակ մարդիկի: Այդ գործի պէտք էին նրան ժողովրդին մօտիկ ու հասարակ մարդիկի: Այդ գործի համար նա ամենէն կարեւոր ոյժ խոստովանում էր քահանաների ու վարժապեսների մէջ, բայց այնպիսի քահանաների ու վարժապեսների, որք քաղաքագէտ են, խօսելու ընդունակ են, ժողովրդի աշքին թող փել զիտեն և այն:

Նա ասում էր, թէ երբէք չի կարող պահանջել, որ իւր այդ գործիքները լինեն աղնիւ ի ներքուստ:—Ենս համոզւած եմ,— պիստում էր նա—թէ աղնիւ մարդը չէ կարող ինձ ծառայել, բայց թո՞ղ նոքա ցոյց չը տան իրենց ներքինը, որպէս զի ժողովուրդը վատահի նոցա: Նա պահանջում էր նրանցից ծայրացել զգուշութիւն ու տոկունութիւն իրենց ձեռնարկութիւնների մէջ: Աջուլ, — թիւն ու տոկունութիւն իրենց ձեռնարկութիւնների մէջ:

կրկնում էր նա շարունակի, —հիշ բիր իշէ ըեծուլ օլամազ։¹⁾ Նա թւում էր իր յատուկ գործիք —վարժապետները և երդում, որ նրանք յաւիտեան պիտի հաց ուտեն ու պաշտօնի վրայ մնան իր չնորհիւ, որչափ էլ անընդունակ չը լինին իրենց արհեստում, կրթական գործում։ Նա պահանջում էր իր բոլոր գործիքներից մի վարպետական և ոչ թէ նդուարդ էֆենդու պէս «անշնորհք» կեղծառորութիւն։ «Թաթլը տիլ, գիւլէր հիւզ, —ասում էր նա —դիւշմէնին կոլունու բիւքէր»։²⁾

Այնուհետեւ նորէն ու նորէն կծու յարձակումներ էր անում նդուարդ վարժապետի արարմունքների վրայ ու սպառնում մնասել նրա ապագային, եթէ չ'ուղղէր իր բռնած ընթացքը։ Նա մեղադրում էր նրան մանաւանդ՝ իր (վաճառականի) պաշտպանութեան վստահանալու համար՝ չափազանց երես առնելու մէջ։ —«Իու զիտես, որ ես գլեթէ մի ակ պաշտպանդ եմ, —ասում էր նա, —և եթէ ես չը լինիմ՝ դու ոչ թէ վարժապետութիւն, այլ ոչ մի գործ էլ չես կարող անել այստեղա»։

— Նա՛ո ճշմարիտ է, —պատասխանում էր կորակնեալ էֆենդին։

— Որ այդ զիտես, էլ ի՞նչու չես մեղքանար գէթ քո զաւակներիդ. չէ՞ ամեն բան սահման ունի. մի անգամ էլ կը պատահի, որ իմ պաշտպանութիւնը չ'անցնի և դու տակը պիտի մնաս... Աէ՞ կուժն ամեն օր ջուր չի բերի»...

Նա յիշեցնում էր նրան քաղաքի բոլոր ուսուցիչների գժգոհութիւնը գէպի նա։ Թւում էր այն բազմաթիւ բաղքները, որ տեղում էին նրա գէմ ի թաղական խորհրդարան թէ՛ ժողովրդի և թէ՛ նրա պաշտօնակից վարժապետների կողմից։ Նա յիշում էր ինչ ինչ աղաւների անունները ու երդուում՝ որ նոցա համար իրիւ կաշառք թաղականութիւն էր յաջողցուցել միմիայն այն պայմանով, որ նդուարդ էֆենդուն պաշտօնանկ չ'անեն, որչափ էլ նրա դասատութիւնը անպէտք ու վարքն անկարգ չը լինի։ Եւ խեղճ նդուարդը հասատում էր Համբարձում աղայի բոլոր խօսքերը։

— Բայց դու մի՛ կարծիր, —ասում էր նրան Զըմնոյեանք —թէ ես

1) «Շտապողը ոչ մի բանի մէջ կատարեալ չի լինի»։

2) «Թաղցր լեզուն ու ժպտող երեսը թշնամու թևն են կոտրում»։

կը պաշտպանեմ քեզ իբրև մի մարդու, որ կարող է ժողովրդին օդաւահու լինել... ինելքիցդ հա՞ն ացդ ցնորքը: Կը տեսնեմ այս կատան: Ես զայն կը սիրեմ ու կը կերակրեմ լոկ այն բանի համար, որ նա կ'ոչնչացնէ իմ տան մկները, իսկ երբ նա անընդունակ դառնայ այդ գործի մէջ,—ես զայն կ'առնեմ ու կը նետեմ փողոց...Այս լա՛ւ հասկացիր... Այդ մէկն երկրորդ՝ մկներս ոշնչացնելով այս կատուն ինքզինքը մեր տան բարեկամ կը ցուցնէ, բայց ի հարկէ ես լաւ կը հասկանամ, որ նրա այդ բարեկամութիւնը իր փորի համար է և ոչ թէ տանս համար: Դու էլ չը կարծես թէ ես քեզ ժողովրդի օգոտի համար կը պաշտպանեմ: Ես քեզ կը պաշտպանեմ իմ անձնական նպատակների ու աֆքիարի համար... Այս էլ լաւ հասկացիր...:

Այսուհետեւ նա խորհուրդ էր տալիս նրան զարդանալ, առաջ տանել իր պերճախօսութիւնը, կարդալ գրքեր ու լրագիրներ, բայց ոչ թէ իսկ ապէս զարգանալու կամ ժողովրդին օգուտ տալու համար, այլ իր թշնամիների աշքին թող փշելու, իր գիտութեամբ նրանց զարմացնելու ու չը թողնելու որ նրանք միշտ «հաչեն» իր վրայ:—«Ցիմար ժողովրդ է, —ասում էր նա—ցուցամոլութիւն պէտք է, բայց դու ծով ես, քիչ կը կարդաս... Այս «Արեւելքները» ես աւելի քեզ համար կը ստանամ, դու գիտես որ ես լրագրից շատ չեմ ախտրժեր. բաւական է ինձ միայն «Ազգային լուդերը» կարդալ, բայց կը տեսնեմ, որ դու էլ ինձ պէս կ'անես...»:

Զայի երկրորդ գաւաթը լեցնելուց յետոյ՝ նա շարունակեց.

—Բայց այս բաները ես քեզ իմ մենեակիս մէջ կ'ասեմ... զու գիտես, թէ ի՞նչ պատիւներ կը տամ քեզ ուրիշների առաջ... Գիտես, թէ ինչքան կը գովեմ քեզ ամեն տեղ... Ամենքն այնպէս համոզած են, թէ ես կը պաշտեմ քեզ... Բայց լաւ իմացի՛ր, Զըրնոցեանը այդքան ցիմար չէ և նրա պաշտպանութիւնն էլ յաւիտենական չէ: «Աօն փիւշմանլըք աքչէ կթմազ—մի՛ մոռանար այս...»

—Հաջի՛ աղայ, —պատասխանեց կատարեալ լացի ձայնով նկուարդ էֆէնդին—հաջի՛ աղայ, ես կոյր չեմ որ ացդ բաները չը տեսնեմ... Ես չեմ տեսներ, որ կեանքս, զաւակներիս ողջութիւնը քեզմէ միայն կախուած է... Ես ապերախտ չեմ և բոլոր հոգովս կ'աշխատեմ մեր երկուքիս «ընդհանուր» նպատակների համար: Զի գիտեմ, որ քո զօրութեան մէջ է ամիսիւած և՝ իմ երջանկութիւնը, կեանքը և

ամեն ինչ... Ո՞վ կուղէ, որ իր աչքը կոյր լինի... բայց ի՞նչ անեմ. ես էլ մարդ եմ, կարող եմ պակասութիւններ ունենալ, պէտք է ներդամիտ լինիս...

— Բայց, ջանրմ; գեօղը (աչք), — ընդհատեց նրան մի թողլ փաղաքշանքով Համբարձում աղան — դարսուի խօսքերով բան չի շինուի, զո՞րծ պէտք է, գո՞րծ... «Լափ իլէ փիլաւ փիշսա, դէնիզ կատար եալ բէնդէն...»¹⁾ Եւ դռւ տղայ չես, որ ամեն օր խրատ տամ քեզ. Փա՛ռք Ասոտուծոյ 48 տարեկան կատարեալ մարդ ես և ես երկու տարով միայն մեծ եմ քեզմէ... Լավ հասկացիր կեանքի պայմանները և աշխատի՞ր վարժուիլ ամեն բանի մէջ... Մենք իս մեր մօր փորից չենք հանել մեր զիտցածները: Քիչէն կը սկսեն, շատին կը հասնեն. «Ազ բիլմէյն, — ասել է թիւրքը — չօղունու հի՛շ բիլմէզ»²⁾:

Էֆէնդին լոեց:

Ականջներս սրեցի ու տեսայ, որ նրանք չայ են խմում: Նրանցից մէկը պարպած զաւաթը զարկեց աղնակի կեղրոնին, փոքր ինչ յետոյ նոյնը արեց նաև միւսը: Ուրեմն երկրորդ զաւաթն էլ վերջացել էր:

— Այս չայն կը փշանայ, — ասաց վաճառականը — չայն կը փոխեմ ու մեր քնածին ձայն կը տամ, որ ելնէ...

«Ուզեմ չ'ուզեմ, հիմայ պէտք է ելնեմ» — մտածեցի ես և կազմ՝ ու պատրաստ սպասեցի տանսակրոջս հրամանին:

Նա փոխեց թէյամանի չայն, ջուր լեցուց սամօվարի մէջ, կրակն աւելցուց ու մօտեցաւ ինձ: Ես նորէն քնածի ձևով շուռ եկայ միւս կողքիս վրայ:

— Պ. Փիրումեանց, — ձայն տուեց նա:

Ես փոքր ինչ ծրմուեցայ:

— Պ. Փիրումեանց, — կրկնեց նա աւելի բարձր:

— Ո՞վ է, — հարցուցի ես, վեր թռչելով յանկարծ ու աչքերս հմաելով:

— Ես եմ, ներեցէք խնդրեմ... Չայն կը պաղի, կուզէք ելնել...

¹⁾ «Եթէ լոկ խօսքով փլաւ կեփուի, ծովի չափ իւղն էլ ինձանից ձեզ նուշը»:

²⁾ «Քիչը չիմացողը, շատն երբէք չի իմանար»:

Ես ելայ և յանկարծ Նդուարդ էֆէնդուն ու սամօվարք տեսնելով, ցաւ յայտնեցի, որ աղջափ ուշ էին ինձ արթնցուցել:

Նդուարդս ընդունեց ինձ սովորական քաղցր ժպիտով։ Նրկուսի մէջն էլ նկատում էր մի ծայրագեղ—արհեստական զուարթութիւն։ Պէտք է ասած, որ ես շատ աննպաստ բաներ էի լսել մինչև այդ օր մեր մանկավարժի մասին—մի բան, որ շատ սովորական ու աժան է Վանում;—սակայն ես երբէք չէի կարող երեւակայել, թէ Նդուարդ էֆէնդին ու Համբարձում աղայ Զըրնոյեանը կապւած էին այնպիսի կապերով, որոնք բացէ ի բաց հերքում էին նրանց հռչակեալ։ առածի կարգն անցած կոյր—բարեկամութիւնը, մտերմութիւնը և այլն։ Նատ միամիտներ, պատմելով Համբարձում աղայի Նդուարդին պաշտելու չափ սիրելը, զարմանքով աւելցնում էին թէ «ի՞նչպէս այդ քաղաքագէտ» համարուած մարդը անկարող է լինում ճանաչել Նդուարդ էֆէնդու ինչ պտուղ լինելը։... Այլ սակայն այդ աւուր զարմանալի դէսկըն ինձ համոզեց, որ Զըրնոյեանը «այն պտուղը չէր բնաւ, որ անկարող լինէր դիմացի մարդը ճանաչել։

Բայց այսպէս թէ այնպէս, Համբարձում աղայի և Նդուարդ էֆէնդու գաղտնի խօսակցութիւնը այնպիսի մի նոր աշխարհ բացեց իմ առաջ, այնպիսի մի տարօրինակ լոյս ձգեց մարդկային կեանքի վրայ, որ ես անկողնիս մէջ պառկած միջոցին՝ մոռածում էի թէ արդեօք երազ չէ՞ր այդ իմ բոլոր լսածները։... Այդ ես կրկնում էի յաճախ, տեսնելով Զըրնոյեանի բունած պատկառելի զիրքը դէպի մեր էֆէնդին և նրան տուած ծայրայեղ գրումլիմանները։ թէ՛ այդ աւուր մեր միասին չայ խմած ժամանակ և թէ՛ յետոյ՝ ամեն մարդոց առաջ, և՛ս առաւել իննոյցքներում։ Բայց ո՞վ կարող է երաշխաւորել, թէ մեր այս անցաւոր կեանքում ամեն ինչ երազ չէ...

Նրանք ծածկեցին իրանց առանձին չայ խմելը և վայելեցին ինձ հետ դարձեալ երկուական գաւաթ։ Զայի ժամանակ մենք չունեցանք մի կարևոր զրուցատրութիւն։ Իմ զարմացման, թէ ինչո՞ւ Համբարձում աղան վերցուցել էր հիւրանոցից իր կանափաներն (Ըստարք) ու աթոռները և կահաւորել զայն ասիսական ձեռվ—նա պատասխանեց թէ՝ «պատիկ Զատկի» առիթով նորոգել է տալիս իր այդ կարասիները։—«Իմ տունը խօ Զըթչենց¹⁾ տունը չէ», որ հիւ-

¹⁾ Տես իմ «Պատկեր. Վասպ. հ. կեանքից» ժողով. ա. դիրք (Հին սերունդ).

բերը մինդարների վրայ նատեն», — աւելցուց նա պարծանքով : Եւ արդարեւ, երբ ես երկու շաբաթէն յետոյ այցելութիւն տուի նրան Ծննդեան տօնի առիթով — ահազին փառահեղութիւն տեսաց նրա հիւրանոցում:

Զ.

Այդ գէպքից յետոյ ես մնացի Վանում դարձեալ երեք տարի և անհրաժեշտ համարեցի ի մօտոյ ուսումնասիրել վէպիկիս այդ երկու զիսաւոր հերաներին: Ուստի դնենք այստեղ քանի մի յաւելումեր այդ հետաքրքիր անձանց վրայ:

Եղուարդ էֆէնդի Թշուառեանը բաւականին կարդացած մարդ էր: Նա շատ էր կարդում եւրոպական՝ հայերէնի վերածւած՝ վէպեր: Հոգի էր տալիս մանաւանդ այնպիսի բօմանների համար, որոնց մէջ ծայրայեղ սիրահարութիւններ էին նկարագրւած: Նա սիրում էր նոյնպէս կարդալ լրագիրներ, բայց շատ թեթև կերպով. քիչ էր կարդում մանաւանդ «քաղաքական» բաժինը, որ նրա կարծիքով «մի շատ կնճռալից բան էր»: Բայց նա յափշտակւում էր աւելի ստանաւորների ու խրթին բանաստեղծութեանց ընթերցումով, լինէր այդ աշխարհաբառ թէ գրաբառ: Նա այնքան սիրահար էր բանաստեղծութեան, որ կամեցաւ իր ուսուցական անունն էլ նուիրել նրան և ընդունեց Վենետիկի միաբան յայտնի Եղուարդ Հիւրմիւզեանի անունը, որ մի բալորովին անձանօթ բան էր իր հայրենակիցների համար:

— Հիւրմիւզեան վարդապետալ, — ասում էր նա ինձ մի անգամ — այնպէս կը թըրթուացնէ սրտիս թելերը, որ կը կարծեմ թէ ամբողջ մարմնովս եթերի մէջ կը վերանամ:

Նա շատ անգամ թղթեր էր մրտում իր «նուրբ» զգացումները ոտանաւորի վերածելու, բայց բաղդը չէր օգնում նրան և շատ քիչ էր պատահում որ յաջողէր այնպիսի բան դուրս բերել, որ կարելի լինէր համարձակ ցոյց տալ ուրիշներին:

— Երբեմն, երբ կը տեսնեմ բնութեան մի հոյակապ երկոյթ, ասում էր նա շատերին, — օրինակ՝ ճաճանչափայլ արեգը, որ կը ցողէ իր անդրանիկ կարմիր շառաւիղները համայն տիեզերքի վրայ:

այնպէս կ'ոգեռիմ, որ եթէ ձեռքիս մատիս չունենամ, մատերիս ծացրերով կը դրոշմեմ որևէ է ստեղիմ վայրկենական տպաւորութիւնները:

Մի նշանաւոր բան, որ չէ կարելի այսուեղ զանց առնել, այդ այն էր, որ մեր պարոնը չէր կարող հինգ տող բան գրել, առանց տասը հաստ սիգարայ քաշելու: Ի յարգանս բանաստեղծութեան, նա հետաքրքիր անուններ էր դրել նաև իր երկու մեռի զաւակներին: Աստղիկ, Արուսեակ, Լուսնթագ, Գեփիւորիկ, Խոպոսիկ և այլն: Ի դեպ է ասել, որ նա ծանրաբեռնւած էր ահադին ընտանիքով և որ նրա կինը, ի մեծ դժբաղդութիւն խեղճ և անապահով էֆէնդու, գրեթէ ամեն տարի մի մի աղջիկ էր ծնում...

Նրա «ագէտ» ծնողները գուշակած չէին երեխ նրա գեղարուեստական ճաշակը և երբ տասնըհինգ, քսան տարի առաջ երզրումի մի տաճկական առեանում նա «քեաթիբի» (Գրագրէ) պաշտօն էր վարում, «Խաչիկ էֆէնդի», չին կոչում նրան ամենքը Փոքր հասակին, նա ստացել էր միայն տարրական ուսում, որով իր ամբողջ ուսումնական պաշարը նա պարտական էր միմիայն իր եռանդուս ինքնաշխատութեան: Բայց ցաւալին այն էր, որ նդուարդ էֆէնդին, գնէ վերջին տարիներում, շատ քիչ օգուտ էր քաղում իր կարդացածներից: Նա ո՛չ թէ միայն չէր իրադրծում իր կարդացած լաւ բաները (որի մասին, փակազծում ասենք, երբէք էլ նա չէր մտածում), այլ և լաւ չէր հասկանում նրանց: Խնձ թւում էր, թէ նա անընդունակ էր կեղրոնացնելու իր ուշադրութիւնը այդ կարդացածների վրայ: Այդ էր պատճառը, որ նա շատ այլանդակ բաներ էր պատմում եւրոպացոց կեանքից ու նիստ ու կացից, թէև շատ անգամ էլ ստուգում էր, որ նա այնպիսի ստեր էր փշում, որոնց մասին երբէք ոչինչ կարդացած չէր: Բայց այդ բաներով նա հրաւիրում էր իր վրայ շատ և շատ միամիտների զարմանքն ու հիացումը:

Նա սիրահար էր նոյնպէս դրաբառ լեզուի, որ գիտէր բաւականին, ինչպէս նաւ տաճկերէն, բայց ծանօթ չէր ո՛չ մի եւրոպական լեզուի: Պերճախոս էր բաւականին, թէև յաճախ կապ չէր լինում իր ասածների մէջ: Բայց ինչ որ ամենակարեւորն է այսուեղ, այդ նրա բոլոր խօսքերի, զգացումների ու քարոզների կեղծութիւնն էր: Նատ դժուար չէր հասկանալ այդ նրա ձայնից ու ծացրացեղ ասանտիմէնտալիզմից: Խակ գալով նրա մօտիկ ծանօթներին, որոնք

քաջ գիտելին թէ Նդուարդը չէ' խօսում այն, ինչ որ մտածում ու անում է—Նրանք բացէ ի բաց զզում էին նրա ամեն մի բառից։ Կեղծաւոր և սոռախօս էր նա ամեն քայլափոխում և իր ամբողջ էռթեամբ։ Այդ մասին նա խորութիւն չէր դնում ո՛չ ծանօթի ու անծանօթի, ո՛չ հեռուի ու մօտիկի և ո՛չ բարեկամի ու թըշ-նամու մէջ։ Երեսանց նա այլպէս էր ամեն մարդու հետ, ժպիտ էր արձակում աջ ու ձախ, բայց ուրիշ բա՛ն էր նրա բռնած ընթացքը նրանց յետելից... Յ՛, այդ շատ ուրիշ բան էր։ Նա չէր կարող գէթ այնքան յաղթել իր քարացած բնաւորութեան, որ անկեղծ երեար նոյն իսկ այն մարդու առջե, որին պատրաստ էր նուիրել իր քողոր գործունէութիւնը, որից կախւած էր, ինչպէս ինքն էր առում, ոչ միայն իր, այլ և իր զաւակների կեանքը... Եւ ընթերցողը վկաց եղաւ, թէ ի՞նչ յանդիմանութիւններ էր ուստում նա այդ մասին հաջի Համբարձում աղաց Զըրնոյեանից։ Մի ապշեցուցիչ ու նորարաքանչ տեսարան էր նրա՝ կիրակի օրեր՝ ո. Պատարագին ներկայ լինելը։ Ամբողջ արարողութեանց միջոցին արտասունքի առուներ էին թափում նրա աշքերից. լալաղին ու կողկողաղին աղօթում, մրմրնջում էր նա բազկատարած... Թերեւս մի թողութիւն էր հայցում Ամենակալ էից, թերեւս իր հայրենակիցների կարեկցութիւնն էր հրաւիրում իր մարդկացին սխալանաց համար—չը գիտեմ. գիտեմ միայն, որ այդ երբէք չէր արգելում իր հակառակորդներին՝ շարունակել նրա վարքի չարաչար քննադատութիւնները... Բայց աւաղելին ու ողբային այն էր, որ խեղճ մարդը մի ժաման ծանր ապաշխարանքից յետոց, դառնում էր նորէն հին «Եղուարդ էֆէնդի Թշուառեանը» և շատ անգամ, առանց տուն երթալու, այցելում էր ուղղակի իր քանի մի «մտերմիներին» ու ծրագիրներ պատրաստում այս ինչի պաշտօնանկութիւնը յաջողցնելու, այն ինչի տունը քանդելու... Մտերմութիւնը մի բառ էր, որ իսկապէս անմատչելի էր նրան։ Լու այնպէս եմ կարծում, որ նա երբէք իր կեանքի մէջ մտերիմ ունեցած չէր, այդ բառի բուն նշանակութեամբ։ Նա պատրաստ էր կապել իր «մտերմութիւնը» անխտիր ամեն մարդու հետ, լոկ այն պայմանով, որ այդ մարդը միանար նրա հետ վնասելու իր անձնական թշնամիներին։ Թէև երբէք Նդուարդ էֆէնդին այդպիսի ախարկ չէր անում այդ թշնամիների մասին, այլ համոզում էր իր «մտերմ-

ներինս, որ նրանք (թշնամիները) կամ «Պօղոսեան» են կամ «ազգի ու թշուառ ժողովրդի ցեցեր»... Ի հարկէ նա այդպէս էր անում նաև հաջի Համբարձում աղայի թշնամիների համար, որոնց նա միշտ իրն էր նկատում: Այդպիսապվ մեր էֆէնդին «բարեկամութիւնը», «մուերմութիւնը» համարում «մեղակցութիւն» բաւին:

Պարծենկոտ էր նա ամեն բանի մէջ. — «Ինձ պէս ուսուցի՞ւ Պօլիս երեք հատ չը կաց, ասում էր նա ամենքին»:

Թշուառեանի ուսուցչական կեանքի մասին արդէն բաւական տեղերութիւն առաւ ընթերցողը նրբե դասատու, նա շատ ապարդիւն էր, զի չը գիտէր ուսուցման մեթոդներ, ծով էր և շարունակ քնում էր դասարանի մէջ: — «Եփէնդի՛, դասենիս ասինք», — զարթեցնում էր նրան կարգի վերջին աշակերտը՝ իր բաժինը կարդալուց յետով: Եփէնդին անմիջապէս վառում էր նախ իր ձեռքում մնացած ու հանգած ծխախոտը և ապա դասը փոխում: Նրբե դաստիարակի, նա շունչը որ և է բարոյական ազգեցութիւն տղաների վրայ. խիստ կոպիտ էր վարում նրանց հետ: Պատահում էր որ երբեմն քանի մի փայտ էր կոտրտում միևնոյն աշակերտի վրայ: Ծովութեամբ, անհաստատմութեամբ և իր յայտնած գաղափարների հակառակ վարմունքով նա արդէն չէր կարող օրինակելի լինել նոցա: Եւ եթէ աւելցնենք այդ ամենի վրայ և' այն, որ տաս տարեկան տղաներն իսկ լսում էին ամեն օր իրենց տանը կամ փողոցի մէջ՝ խիստ անարգական խօսքեր նրա վրայ. — կարող ենք մի որոշ դաշտափար կազմել նրա՝ աշակերտների վրայ ունեցած՝ բարոյական զօրութեան մասին: Նրբե ընկեր, նա նախանձու էր ու ատելի իր պաշտօնակիցներին. խռովութիւններ ու ինտրիգներ էր յարուցանում նրանց մէջ, զինում իրարու դէմ և լրտեսութիւն անելով նոցա գործերից՝ յայտնում խեղաթիւրւած ձևով վարժատան հոգաբարձուներին:

Համբարձում աղայի և նրա կուսակիցների հրամանով, նա զրում էր երբեմն նաև պաշտօնական ու ոչ-պաշտօնական յօդւածներ իրանց «ընդհանուր» թշնամիների դէմ: Այդ թղթակցութիւնները ուղարկում էին Պատրիարքարան կամ լրազիրների խմբագրատներ և նոցա նպատակն էր պաշտօնանկ անել կամ գէթ խացտառակել աշխարհի առաջ իրանց չը հաւանած մարդիկներին: Էալց Զըրնոյենց խումբը ունէր նաև ուրիշ թղթակիցներ քաղաքի երիտասարդներից:

Եղուարդ էֆենդին ատելի էր հաւասարապէս ժողովրդի բոլոր դասակարգերին, մանաւանդ նրա ռամիկ կոչւած մասին։ Մինչ շատ տղէտ, հազիւ գրել—կարդալ իմացող, բայց բարեբարոյ ուսուցիչների զիրքն ու ժողովրդականութիւնը այդ երկրի ռամկութեան մէջ շատ և շատ նախանձելի էին։ Բայց ի հարկէ կուժը միշտ ջուր չէ բերի՛ և նա մի անգամ պիտի կոտրւի, ինչպէս այդ հաստատում էր հաջի Համբարձում աղայ Զըրնոյեանը։

Այզպիսի մարդ էր ահա իմ բարեկամ Եղուարդ էֆենդի ԹՀՀ-ուառեանը։

Է.

Պայով Համբարձում աղայ Զըրնոյեանին—նա ինձ աւելի անհանդիստ էր անում իր գիւղական գործերով։ Մէկ առաւօտ, այգեստանի նեղ փողոցներից մէկում, տեսայ դիմացս արագ արագ եկող մի գիւղացի։

—Աստուա՛ծ սիրես, աֆանդի՛, —ասաց նա՝ ինձ հաւասարուելով, էսա սոխախէն (չողոց) կանա՞մ Համբարձում աղենց տան ճամբախ գտնել։

—Զըրնոյեանց Համբարձում աղայի, —հարցուցի նրան։

—Հրա՛ման քե, Զըրնոյե՛նց։ Ես գիտի ինոնց տուն, ամմա աշալայ ի, ինկայ էսա ծուռ-մուռ սոխախներ, շըշկուայ։

Ես տուի նրան պէտք եղած հրահանգներն ու մէկ հատ էլ սիգարայ։

—Ախապե՛ր, անունդ ի՞նչ է, —հարցուցի ես։

—Աւօ՛ քե ծառայ, Գ. գեղէն եմ։

—Համբարձում աղենց ի՞նչու կ'երթաս։

—Աֆա՛նդըմ, էտա նազ էրգէն ի, ամմա թարիֆ անեմ, բալքա սրտիս էրոցք խոնաց... Ո՛չ, շունչս կորաւ... Սանջուն (չողոցի ծանչոց) ձի (ինչ) բռնե... Ճամբախ քրտնած ի, պաղ ջուր շատ խմալ.. Գիտե՞ս, աֆանդի, ութ սահաթվան ճամբախ հինգ սահաթվան մէջ էկայ... Աղօթրանին ելայ մեր գեղից, գեօյ մըկայ հասայ էսատեղ. ես կա՛սեմ սահաթ մէկը¹⁾ կայ մըկայ...»

¹⁾ Տաճկաստանում ժամերի հաշիւմ սկսում են արևի մոնելու լուպէից և ոչ կէսօրից, ինչպէս մեղանում։

— Ճիշտ մէկն է, — պատասխանեցի եւս:

— Աֆա՛նդրմ, էսա մարդուց հինգ տարի առաջ քսան ոսկի պարտք առի, մըկայ էլե լիսուն ոսկի: Պատիկ ախաղէրս էն տարի Ստամբոլ ճամբեցի, ինչ որ էն վաստըկաւ՝ հօրօնիկեց ձիկ, տարի տուի Համբարձում աղին ֆայիզ (Պուռա) ... Չորս տարի գեօյ էնապէս էլաւ: Մըկայ ախաղէրս Ստամբոլ գործ շունի, հիւանդ ի, էս մէկ տարի ի հիշ պըլիկ մը չ'էօրօնիկեց ձիկ, որ տի (Պուռա) ֆայիզ... Երէկ մեր ռէս Մելօն ձիկ սալախ (Պեղչութեան) իսու, որ Համբարձում աղէն հիւքիւմաժ (Պատարան) արզիւհալ է տուե, կ'ուզի երկու արտա ծախե... Վա՛խ իմ ճմեր, վա՛խ իմ ճմեր... — յոգուց հանեց Աւօն ու պինդ զարկաւ ձեռքը իր յոգնած ծնկներին:

— Մըկայ դու ի՞նչ կուզես անել, — հարցուցի եւս:

— Աֆա՛նդրմ, երէկ որ էտա խաբարն առի, շաշմիշ էլայ, խելք կուրիսաւ, գիշերս նա՛ քուն էկաւ, նա՛ բան... Մըկայ կ'ասեմ՝ գնամ ոտքն ինկնեմ, բալքա արզիւհալն յետ առնի, տունս չը քանդի... Խե՛նք (Պեղչութեան) Աստոծ ի՞նչ յաջողութեն կրտայ... Ա՛խ, Աստուած...

— Եղ քսան ոսկին ի՞նչու առիր, Աւօ՛ ախաղէր...

— Վէրգի (Պուռա) տուի, աֆա՛նդի, վէրգի տուի... Աստոծ ասաբքեարի տունն աւերի, ուրիշ բան չեմ ասեր... Էսա մեր փուճ Մելօն նոր էր ռէսութեն առե, զուեց թէ իլլահ (Պատարան) պիտի պարտքդ տաս: Քանի մի տարւան վէրգի կար վրաս, էն տարին էլ հունձն աղէկ չ'էլաւ, գնացի Համբարձում աղի ոտքն ինկայ, ի՞նչ անի ես... Գինե՛ (Պարքեալ) վէրգու տափէն չ'ելայ, գինէ՛ քանի մը տարւան վէրասիայ (Պատարան) կայ վրաս... Ա՛խ, Աստոծ, խե՛նք մեր աղդի վերջն ի՞նչիս պիտ որ էլնի... Մնա՛ս բարին, աֆա՛նդի, աջալայ եմ, գործից յետ կը մնամ...

Գնա՛ց Աւօ ախաղէրը ու թողեց զիս խորասուզւած մե մոքերիս մէջ: Ես ի հարկէ բնաւ չէի զարմանում, որ 20 ոսկին (200 ր.) 50-ի էր հասել: Քիշ էր պատահում, որ Համբարձում աղան հարիւրին երեք տոկոս առնէր գիւղացիներից: Նա մեծ մասամբ հինգ էր վերցնում, բայց ոչ թէ տարեկան, այլ ամսական, զի տարեկան տոկոս հաշուելը բոլորովին անծանօթ է այդ երկրում: Հինգի հաշւով, քսան ոսկու համար նրան պիտի հասնէր ամսական մէկ ոսկի, հինգ տարում՝ վաթտուն ոսկի, եթէ չը հաշւենք տոկոսի տոկոսը: Այդ

վաթսունից ՅՈ ոսկին և կրկնակի տոկոսը, ինչպէս երեսում էր, վը-ձարած էր Աւօի պանդուխտ եղբայրը, որով կը մնար ճիշտ մաթեմա-տիքական հաշւով յիսուն ոսկի պարագաներուն...»

Երրորդ առաւօտ իմ աշակերտներից մէկը, որ աղքատ դարբնի մը տղայ էր, փոքր ինչ ուշացաւ: Երբ ես հարցուցի պատճառը՝ նա արեց ինձ հետեւեալ պատմութիւնը: —

—Չորեքշաբթի իրիկուն, հօրս հետ հիւանդ գիւղացի մը եկաւ. մեր առն, կ'ասէր թէ սանջու ունէր, շատ կը տքար... Երէկ առաւօտ գողի ժամին (արշալոյնից առաջ) մեռաւ, տարանք ժամ: Էսօր թաղեցինք, հայրս ինձ էլ եկեղեցի տարաւ:

—Այն գիւղացու անունն ի՞նչ էր...

—Աւօ՛: Գ. գեղէն էր:

—Տքալու ժամանակ ուրիշ բան կ'ասէ՞ր...

—Համբարձում ազին շատ ուշունց կուտար... Մեռնելու ժա-մանակ ։Ախ, մա՛րէ (Հայրէն) կ'ասէր...

—Գիւղէն մարդ բերի՞ք նրա թաղման համար...

—Ե՛, գիւղը զատն է (Աեռու), մարդ չը գտանք, որ ուղարկէինք:

Ո՛հ, ի՞նչ այնքան դիւրին, քան մեռել թաղել Վասպուրա-կանում: Դեռ ես մեռելը չը պաղած, ժամկոչը բերումէ իր «Նաշը». մերկ ննջեցեալը՝ փաթաթւած կնոջ մխմէլով («աւանդն») դրսում է նրա մէջ ու եկեղեցի տարւում: Ժամկոչը իսկոյն լւանում է նրան այնտեղ: Մէկ ժամից յետոյ հանգուցեալի մօտիկ ազգականները քանի մի կանգուն կտաւի հետ եկեղեցի երթալով, փաթաթում են դիւրի ուից ցգլուխ այդ լաթում ու աղատանքու կարում: Միւս օր, կանուխ առաւօտ, եկեղեցական արարողութիւնները աւարտելուց յետոյ, զետե-զում են նրա մարմինը, առանց դագաղի, սոսկ պատանքով, մի կան-գուն (արշին) խորութեան փոսում ու հողով ծածկում... Այդպէս է յանձնում այստեղ հողին ամեն ոք՝ մեծասուն թէ տնանկ, մա-նուկ թէ հասուն, ուսեւալ թէ անուս...»

Խակ անաշը եկեղեցապատկան մի արկղաձև երկայն պատղարակ է, բոլորպին բաց երեսով ու սանդղուաձև յատակով: Նրա երկու զոյդ ծացերը դնուում են չորս մարդու ուսի վրայ ու զնացքը շարժ-ուում...

Մէկ ամսից յետոյ ևս տեղեկացայ, որ Համբարձում աղայ Զըրնոյ-յեանը դրաւել էր արդէն հանգուցեալ Աւօի երկու արտերը ու անօթի թողել նրա բազմամբով ընտանիքը:

Այդ մշտական վաշխառութիւնից զատ, Համբարձում աղան ըստանձնում էր նոյնպէս կառավարութիւնից գիւղական տուքերի հաւաքչութեան արտօնութիւնը և նրա գործակատարները շատ աւելի խստութեամբ էին վարւում շինականների հետ, քան կառավարութեան ուղարկած ոսարիկանները:

Նա երբեմն պաշտօն էր վարում նաև դատաստանական ատեաններում և այդ ոչ միայն նիւթական շահի համար, այլ իրեւ մի առիթ իր հակառակորդների վրէժը լուծելու (Երբ Կրտոնք գործ առնեացին այնպէղ) և հասարակութեան աչքում իր ազդեցութիւնն աւելցնելու: Թէև նա ըստ գիտէր ոչ օրէնսդիտութիւն և ոչ տաճկական դրագիտութիւն, այլ միայն խօսում էր այդ լեզուով:

Նրա ընտանեկան կեանքը բաւականին մռացը էր. նա չէր սիրում ոչ իր կնոջ և ոչ մանր զաւակներին: Բայց նա աւելին էր անում. նա շարաշար ծեծում էր իր կնոջ ամեն մի չնչին բանի համար ու կաշկանդում զայն տան սլատերի մէջ՝ տարին տասերկու ամիս: Բայց նրա հետ խօսողը, նրա քաղցր ժափանները տեսնողը՝ երբէք չէր կարող մուրով անցկացնել այդ և այդ՝ էր ապաքէն Համբարձում աղայի քաղաքական փիլիսոփայութեան հիմնական սկզբունքը:

— Ներքուատ ի՞նչ կ'ուզես եղի՛ր, — ասում էր նա Եղուարդ է-ֆէնդրան — բայց վարպետութիւնդ նրա մէջ պէտք է լինի, որ մարդոց առաջ լաւ երևաս:

Նւ ցիրաւի, նրա հանճարը անվիճելի էր այդ մասին:

Համբարձում աղայ Զըրնոյեանը մի քիչ պարարտ, արիւնալից ու մե աչքունքով մարդ էր: Նրա կենսագրութիւնը համառօտ կապելու համար աւելցնենք նաև, որ նա շատ էր մեծարում իր հաւանած Առաջնորդներին և յաջողում՝ օգուտ քաղել նրանց մեծազօր դիրքից:

Հաւատում եմ շատերի հետ, որ մեծ քաղաքագէտ էր նա: